բեմն մի ոք լցէ զի ըստ կամաց և ըստ հաճոյից իւրոյ իշխեսցի 'ի վերայ մեր, եթէ ոչ ըստ Օրինօք գործոյ ձեռաց մերոց հատուսցէ մեզ ըստ արժանւոյն գործոյ մերոյ, զի ամենայն ոք առանց ձանձրանալոյ արժանի գտցի պատուոյ և պատժոյ ըստ արժանաւորութեան գործոյն իւրոյ, զի այս թագաւորութիւնս Շնորհեցաւ մեզ 'ի Տեառնէ Արարչէ մերմէ 'ի սկզբանէ արարածոց 'ի ժամանակի նախահօրն մերոյ Ադամայ, որում Արարիչն մեր ամենակարող զօրութեամբն իւրով ամենայն ստեղծուածք 'ի վերայ երկրի և 'ի ներքոյ արեգական հնազանդ մեզ բանական բնութեան մարդոյ արար, և 'ի վերայ բնութեան մերոյ ինքն միայն թագաւորեաց ըստ Օրինօք, այսինքն՝ զի ամենայն ծառոց պտղոց կերիցէ, բայց 'ի պտղոյն չարէ. այս օրէնս միայն եղև թագաւոր 'ի վերայ մեր, վասն որոյ ոչ ոք այլ պատճառիւ իշաւ բնութիւնս մեր այնքան ծայրագոյն իշխանութենէ ազատութեան առ 'ի ծառայութիւն մահու, եթէ ոչ գործոյ ձեռաց մերոց անօրէնութեան, որում անցաք ըստ Օրինաց Տեառըն և սուաւ ցան և ցրիւ լինելով՝ անկայք 'ի ներքոյ լծոյ ծառայութեան 'ի յերեսս երկրի, և յանձն առաք ընդունիլ մահ և իջանել 'ի հող յորմէ ելաք և հատուցումն գործոյ ձեռաց մերոց հատուցանել 'ի հանդերձելումն յաւիտեան և մինչև յաւիտեան։